

ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ ՏԻՐՊՈՐՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆՑ ԿԵԴՐՈՆ
4901 EVERGREEN ROAD
DEARBORN, MI 48128-2406
(313) 593-5181

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ / ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆՑ ԿԵԴՐՈՆԸ ԿԸ ՀԱՍԱՀՈՎԱՆԱԻՈՐԷ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՀՐԷԱԿԱՆ ՈՂՋԱԿԻԶՄԱՆ
ԱՍԵՆԱՍԵԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ - ՏԻՐՊՈՐՆԻ ՄԷՋ

Տիրապրն, Միշիկըն, 21 Մայիս 2007 Հայոց Ցեղասպանության ու Հրեական Ողջակիզման վեցերորդ ամենամեայ ոգեկոչումը տեղի ունեցաւ Միշիկըն Համալսարան - Տիրապրնի «Ֆերլէյն Սաութ» մասնաշէնքին մէջ, Ուրբաթ, 20 Ապրիլ 2007ին: Ոգեկոչումը միասնաբար կազմակերպած էին Միշիկըն Համալսարան - Տիրապրնի Հայագիտական Հետազոտութեանց Կեդրոնը, Ողջակիզումէն Վերապրողներու Բանասոր Պատմութեան Տեսալտողական Արխիւն ու Մարտիկեան Գրադարանը, ինչպէս նաեւ Միշիկըն Համալսարան - Էն Արպըրի Հայագիտական Ուսմանց Ծրագիրն ու Ուէյն Սթէյթ Համալսարանի Հրեական Ուսմանց «Քոն-Հետո» Կեդրոնը:

Օրուան գլխաւոր բանախօսներն էին Ֆլորիտայի Համալսարանի հրեական ուսմանց եւ ընկերաբանութեան փրոֆեսոր Թամիր Սորէք ու Միշիկըն Համալսարան - Էն Արպըրի արդի հայոց պատմութեան փրոֆեսոր Ժիրայր Լիպարիտեան: Երկու ակադեմականներն ալ չվարանեցան անկաշկանդ արտայայտել իրենց անձնական համոզումները՝ իրաքանչիւրն իր ներկայացուցած թեմային վերաբերեալ:

Սորէք խօսեցաւ «Ողջակիզումն ու Հանրային Մշակոյթը Իսրայէլի մէջ» թեմայով: Առաջին հերթին, ան նշեց թէ Ողջակիզումէն քաղուած դասերը կարելի է բաժնել երեք տարբեր՝ հրեական, սիոնական եւ համաշխարհային խումբերու: Հրեական դասերը կը կեդրոնանան երկու կէտերու շուրջ.- (ա) անհրաժեշտ է ապահովել հրեաներու միասնականութիւնն ու յոյս դնել միայն հրեաներու վրայ, եւ (բ) պէտք է հետապնդել հակա-սեմականութեան բոլոր դրսեւորումներն ու պայքարիլ անոնց դէմ: Միս կողմէ, սիոնական դասերը կարելի է համառօտել չորս կէտերով.- (ա) արտերկրի մէջ հրեաներու համար ապահովութիւն չկայ, (բ) Իսրայէլ պետութեան ինքնիշխան գոյութիւնն անհրաժեշտութիւն է, (գ) հրեաներու համար ապահովագոյն վայրը Իսրայէլն է, եւ հետեւաբար՝ (դ) բոլոր հրեաները պէտք է գաղթեն Իսրայէլ: Վերջապէս, Ողջակիզման համաշխարհային դասերը երկուքն են.- (ա) պէտք է պայքարիլ հակաժողովրդավարական երեւոյթներու եւ ցեղապաշտութեան դէմ, եւ (բ) ամենուրեք պէտք է պաշտպանել փոքրամասնութիւններու իրաւունքները:

Սորէք հաղորդեց թէ երբ իսրայելացիներն ու Իսրայէլի կառավարութիւնը անապահով կը զգան, շատ աւելի քիչ հաւանական է, որ որդեգրեն Ողջակիզման համաշխարհային դասերը եւ ըստ այդմ ճանչնան հայոց ցեղասպանութիւնը: Ընդհակառակը, համաշխարհային դասերու ընդունման եւ հայոց ցեղասպանութեան ճանաչման հաւանականութիւնը պիտի աւելնայ յարաբերական ապահովութեան տարիներուն: Իր այս կարծիքն ապացուցելու համար Սորէք մատնացոյց ըրաւ Իսրայէլի վերջին տարիներու պատմութիւնը, զոր ան բաժնեց երեք ժամանակահատուածներու՝ պաղեստինեան առաջին ըմբոստութեան ժամանակաշրջան (1987-1993), Օսլոյի խաղաղութեան գործընթացի ժամանակաշրջան (1993-2000) եւ պաղեստինեան երկրորդ ըմբոստութեան ժամանակաշրջան (2000-2004): Միայն խաղաղութեան գործընթացի տարիներուն է, որ իսրայէլեան կառավարական պաշտօնեաներ ներկայ գտնուած են տեղի հայ համայնքի կազմակերպած Ապրիլ 24ի սգահանդէսներուն: Նոյնպէս 1994ին էր, երբ Իսրայէլի արտաքին գործերու փոխ-նախարար Եոսի Պէլլիին Քնեսէթի մէջ աներկբայ յայտարարեց թէ հայոց դէմ գործուած բռնարարները «վստահաբար ջարդեր էին ու ցեղասպանութիւն, բան մը, զոր աշխարհ պէտք է յիշէ»: Սորէք իսրայէլեան պաշտօնական վարանոտ դիրքորոշումը մեկնաբանեց այն հանգամանքով, թէ երբ կը գերակշռէ անապահովութեան զգացումը, Իսրայէլի համար աւելի թանկարժէք կ'երեւի Թուրքիոյ՝

իբրեւ իսլամական ու միջին-արեւելեան պետութեան բարեկամութիւնը: Հայոց ցեղասպանութիւնը չճանչնալու ուղղութեամբ Իսրայէլի վրայ բանեցուող թրքական ճնշումը աւելի արդիւնաւետ եղած է վտանգի զգացողութեան քան թէ համեմատական ապահովութեան տարիներուն:

Սորէքի համաձայն, Իսրայէլի կողմէ հայոց ցեղասպանութեան չճանաչման աւելի կարեւոր ազդակ է Ռոջակիզման հետեւանքով այսօր հրեաներու վայելած «զոհի կարգավիճակէն» հրաժարելու հարցը: Դասախօսը մատնանշեց թէ այս կարգավիճակը հրեաներուն որոշակի քաղաքական դրամագլուխ կը տրամադրէ, զոր կարելի է գործի դնել ի պահանջել հարկին: Նման կարգավիճակ ճանչնալ այլ խմբաւորումներու եւս վերջ պիտի տայ հրեաներու առանձնաշարակ դրութեան, իսկ միւս կողմէ «զոհի կարգավիճակի» յաճախակի օգտագործումը անխուսափելիօրէն պիտի հասարակացնէ այդ գաղափարը: Սորէք իր ելոյթն աւարտեց յոյս յայտնելով, որ իսրայէլացի հրեաները ապագային իրենք զիրենք բաւարարաչափ ապահով պիտի զգան որպէսզի դարձեալ կարենան ըսել «Ո՛չ երբեք» քան թէ «Ո՛չ երբեք մեզի դէմ»:

Ժիրայր Լիպարիտեանի բանախօսութեան խորագիրն էր «Մարտահրաւէր Ներկային. Ի՛նչպէս մտածել անցեալի մասին՝ ապագան ծրագրելու ժամանակ»: Ան փորձեց վերլուծել թէ ի՛նչպէս հայոց ցեղասպանութեան յիշողութիւնը կը հունաւորէ (եւ պէտք է հունաւորէ) Հայաստանի պաշտօնական ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը:

Առաջին հերթին, Լիպարիտեան նշեց թէ Թուրքիոյ կողմէ հայոց ցեղասպանութեան չճանաչումը հայերը զանիկա ապացուցելու հարկադրանքին տակ կը դնէ: Հետեւաբար, հայերը յաճախ կ'անտեսեն ցեղասպանութիւնը վերլուծելու անհրաժեշտութիւնը: Լիպարիտեան միաժամանակ զգուշացուց, որ հայերը ցեղասպանութեան նախադրեալները բացատրելու եւ վերլուծելու գործընթացը յաճախ կը շփոթեն զանգուածային սպանող արդարացնելու փորձերուն հետ:

Այս առանձնաշարակութիւնները ընդգծելէ ետք, Լիպարիտեան մատնանշեց թէ մինչեւ 1960-ականներու կէսերը, սփիւռքի հայագաղութներուն մէջ բաժանման գլխաւոր գիծը Խորհրդային Հայաստանի օրինականութեան հարցն էր: 1970-ականներուն, սակայն, Թուրքիոյ եւ աշխարհի այլ պետութիւններու կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը փոխարինեց Խորհրդային Հայաստանի շուրջ բանավեճը իբրեւ գլխաւոր խնդիր, եւ առաջինիս շուրջ միաւորուեցաւ հայ սփիւռքը: Հայաստանի եւ սփիւռքի հայ նոր սերունդները թուրքերու հետ անմիջական կապ չունին: Անոնց մեծ մասին համար թուրքը դարձած է վերացական գաղափար մը, զոր կարելի է հեշտութեամբ ասել:

Լիպարիտեան, որ յետ-խորհրդային Հայաստանի առաջին նախագահի վարչակազմի բարձրաստիճան պաշտօնատարներէն էր, ընդգծեց, որ հայոց ցեղասպանութեան ճանաչման խնդիրը 1988ին Հայաստանի մէջ ծնունդ առած Դարաբաղեան Շարժման հիմնական նպատակակէտերէն չէր: Այս շարժումը նախ պահանջեց Լեռնային Դարաբաղի միացումը Հայաստանին եւ յետոյ յաջողեցաւ Խորհրդային Միութենէն անկախութիւն ձեռք բերել: Լիպարիտեանի համաձայն, հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին նկատմամբ նման դիրքորոշումը բնականաբար ցեղասպանութեան փաստի ուրացումը չէր: Դարաբաղեան Շարժման ղեկավարները պարզապէս չէին ցանկար հայոց ցեղասպանութեան ճանաչման խնդիրը օգտագործել անկախութեան գաղափարը թերարժեւորելու համար:

Հայաստանի դէպի անկախութիւն անցման շրջանին, ըսաւ Լիպարիտեան, երկրի ապագային նկատմամբ երկու հակոտնեայ տեսլականներ լայն քննարկման առարկայ դարձան: Առաջին աշխարհահայեացքը Հայաստանը կը ներկայացնէր իբրեւ փոքր եւ մշտապէս հալածուած երկիր մը, որ ստիպուած էր յենուլ Խորհրդային Միութեան կամ Ռուսաստանի վրայ: Այն կը պնդէր թէ Թուրքիան, որքան ժամանակ որ չի ճանչնար հայոց ցեղասպանութիւնը, աւելի հաւանական է որ օր մը ներխուժէ Հայաստան: Մինչդեռ, երկրորդ աշխարհահայեացքին համաձայն, Հայաստանը պէտք է դառնայ բնական երկիր մը՝ իր դրացիներուն հետ բնականոն յարաբերութիւններով: Այս տեսակէտի հետեւորդները կը հաւատային թէ Թուրքիոյ հետ բնականոն յարաբերութիւններ հաստատելով անոնք յետագային կրնան երկկողմանի այլ հարցեր ալ լուծել, ներառեալ՝ ցեղասպանութեան ճանաչման խնդիրը: Քանի որ այս երկրորդ աշխարհահայեացքը տիրական էր 1990-ականներու սկիզբը, Հայաստանի յետ-խորհրդային առաջին սահմանադրութիւնը հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը երկրի արտաքին քաղաքականութեան հիմք չդարձուց: Միաժամանակ, երբ Հայաստան 1991ին Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացման համար երկկողմանի բանակցութիւններու ձեռնարկեց, թրքական կառավարութիւնը այդ

բանակցութիւններն սկսելու որպէս նախապայման Հայաստանէն պահանջեց հրաժարիլ ցեղասպանութեան ճանաչման հարցէն: Լիպարիտեան պատմեց թէ թուրքերը յետագային հրաժարեցան այս նախապայմանէն երբ զգացին թէ Հայաստան վերջինիս հետ չէր զուգակցեր յարաբերութիւններու բնականոնացման հարցը: Միայն Ղարաբաղի հայ անջատողականներուն Հայաստանի տրամադրած օժանդակութիւնն ու դարաբաղցիներու Ատրպէյճանի դէմ տարածքային նուաճումները վերջ տուին հայ-թրքական բանակցութիւններուն:

Լիպարիտեան հաստատեց թէ, այդ ժամանակ, Հայաստանի ներկայ նախագահ Ռոպերթ Քոչարեան, որ տակաւին Ղարաբաղի մէջ իշխանութեան գլուխ կը գտնուէր, համաձայն էր, որ Հայաստան հրաժարի ցեղասպանութեան նախապայմանէն եթէ փոխարէնը Թուրքիան հրաժարի Ղարաբաղին առնչուող նախապայմանէն: Ըստ Լիպարիտեանի, Քոչարեանի սոյն դիրքորոշումը կը բխէր այն համոզումէն թէ Ղարաբաղ դիւանագիտական աւելի ուժեղ դիրքի վրայ պիտի յայտնուի եթէ Հայաստանն ու Թուրքիան բնականոն յարաբերութիւններ ունենան: Ապա, Լիպարիտեան Քոչարեանի այս հին տեսակէտը հակադրեց անոր ներկայ դիրքորոշման՝ իբրեւ Հայաստանի նախագահ: Ան յայտնեց թէ Քոչարեան ներկայիս ցեղասպանութեան ճանաչման խնդրին կը մօտենայ Հայաստանի ազգային ապահովութեան դիտանկիւնէն: Նախագահի այս նոր դիրքորոշումը, ըստ Լիպարիտեանի, աւելի մօտիկ է այն տեսակէտին թէ Հայաստանը մշտապէս չարչարուած երկիր մըն է:

Լիպարիտեան ներկաներուն նաեւ յիշեցուց թէ Վազգէն Սարգսեան՝ Հայաստանի բանակին հիմնադիրը, նոյնպէս չէր ախորժեր երբ հայերն իրենք զիրենք իբրեւ զոհ կը ներկայացնէին: Յատկապէս ռազմաճակատի վրայ Ատրպէյճանի դէմ արձանագրուած յաջողութիւններէն ետք, Սարգսեան հռետորաբար հարց կու տար. «ինչո՞ւ ցեղասպանութիւնն է, որ պիտի սահմանէ մեր նկարագիրն ու ազգը երբ մենք այլեւս յաղթական ենք»:

Լիպարիտեան անձնապէս կը հաւատայ թէ զոհի զգացումը կրնայ արմատաւորուիլ հայու նկարագրին մէջ եթէ ցեղասպանութիւնը աշակերտներուն մատուցուի շատ փոքր տարիքէն: Եթէ միայն հայոց ցեղասպանութեան ողբերգական երեւոյթներուն վրայ կեդրոնացուի, Հայաստանի առջեւ բազմաթիւ ընտրանքներ կրնան փակուիլ:

Ձոյգ դասախօսութեանց յաջորդեց հարց ու պատասխանի կարճ բաժին մը, որու ընթացքին Լիպարիտեան անհաւանական գտաւ ԱՄՆի Ներկայացուցիչներու Տան կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչման ձգտող նախագիծի հաստատումը:

Աւելի ուշ, ներկաներուն, ներառեալ՝ ՀԲԸՄ Ալեք եւ Մարի Մանուկեան երկրորդական վարժարանէն աշակերտներու, մատուցուեցաւ ճաշ: Այդ ընթացքին, ներկաներն առիթ ունեցան յաւելեալ զրոյց ունենալու բանախօսներուն հետ: